# ՀՀ ԳԱԱ-Ն գոյատեւման չնչին միջոցներ է պահանջում

2001թ. հունվարի 15-ին ԳԱԱ շենքի դիմաց կազմակերպված հանրահավաքում գիտաշխատողները պահանջում էին մինչեւ նույնի 22-ը մարել 2000թ. 4 ամսվա թեմատիկ ֆինանսավորումներով գիտական հիմնարկների պարտքերը:

Նշված ժամկետը լրանալուց եւ պահանջի անկատար մնալուց հետո ԳԱԱ արհմիությունը դարձյալ հրավիրել էր աշխատակիցների հավաք այս անգամ արդեն ժողովի տեսքով, որին հրավիրված էին ՀՀ նախագահը, վարչապետը, ԱԺ գիտության եւ կրթության հանձնաժողովի նախագահը: Հրավերին հեռակա արձագանքել էր միայն Շավարշ Քոչարյանը՝ տեղեկացնելով, որ բացակայության պատճառը իր գլխավորած հանձնաժողովի նույն օրը հրավիրված նիստն է:

Կառավարությունը խոստացել է ԳԱԱ աշխատակիցների աշխատավարձերի պարտքերը մարել առաջին եռամսյակի ավարտին, իսկ 2001թ. հունվարի աշխատավարձն արդեն բացված է: Սակայն այս փաստը շատ չոգեւորեց ժողովի մասնակիցներին: Նրանց համոզմամբ, նույնիսկ այդ չնչին աշխատավարձի վճարումը մեծ նշանակություն ունի Հայաստանի գիտական պոտենցիալը պահպանելու գործում: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թվում գիտական մեծ ներուժով Ուկրաինայից հետո առաջին տեղը զբաղեցնող Հայաստանի գիտությունների ակադեմիան այժմ զրկված է տեսական հովանավորությունից եւ կանգնած քայքայման վտանգի առաջ: Գիտական տարբեր ինստիտուտներ ֆինանսների չգոյության պատճառով զրկված են ջրից, էլեկտրաէներգիայից, հեռախոսային կապից: Հայաստանում 2000թ. չի տպագրվել ոչ մի մենագրություն, չեն տպագրվում նաեւ ԳԱԱ բազմաթիվ ամսագրերը: Գիտնականները զրկված են արշավախմբեր, գիտական փորձարկումներ անցկացնելու հնարավորությունից, սովամահ են լինում գիտափորձերի համար պահվող կենդանիները: 1988թ. համեմատ, Հայաստանի գիտական ներուժը պակասել է 4, իսկ երիտասարդ գիտնականների թիվը՝ ավելի քան 20 անգամ: Որոշ ինստիտուտներում այսօր աշխատում են ընդամենը 1-3 երիտասարդ մասնագետներ: Գիտնականները համոզված են, որ այս ամենը գիտության նկատմամբ պետական այրերի անհարգի վերաբերմունքի ապացույցն է:

ԳԱԱ ղեկավարությունը աշխատավարձերի պարտքը մարելու պահանջով դիմել է ՀՀ գիտության եւ կրթության, ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարություններ, որտեղից պատասխանել են, թե աշխատավարձերը սառեցվում են հարկերի ոչ լրիվ ծավալով գանձվելու պատճառով:

ԳԱԱ աշխատակազմը կառավարությունից պահանջում է հովանավորել Հայաստանի հիմնարար գիտության ոլորտը:

*ՆԵԼԼԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*Հ.Գ. Ժողովականներից մեկը, շատ քննարկումից հետո, խնդրի լուծման իր դեղատոմսն առաջարկեց. հերիք է մեկ-երկուսի կաշառքի գլխին տալ, եւ պարտքերը փակելու խնդիրը կլուծվի: Նրա ասելով, թեմատիկ ֆինանսավորումների ամենամյա վճարը միջին հաշվով 10 հազար դրամ է, իսկ ԳԱԱ ինստիտուտներից ամեն մեկում հազիվ 40-50 աշխատողներ են մնացել:*